01/10.1/16351-14 2014-10-08

AJV-40-05 2014-10-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գագիկ Ջհանգիրյանի, Լյուդմիլա Սարգսյանի, Ստեփան Դեմիրճյանի, Արամ Մանուկյանի և Լևոն Ջուրաբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-582-29.08.2014-ՊԻ-010/0 և Պ-582[1]-29.08.2014-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

I. «Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1) օրենքի նախագծում հստակեցման կարիք ունի «զոհ» հասկացությունը: Օրենքի նախագիծն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ դրանում միաժամանակ օգտագործվում են թե՛ **«տուժող»**,

թե՛ **«զոհ»** հասկացությունները: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «տուժող» հասկացությունը, մասնավորապես, օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «**Տուժող** է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, **եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»**: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ևս օգտագործվում է «տուժող» հասկացությունը.

2) համաձայն 2-րդ հոդվածի՝ սույն օրենքի իմաստով բռնությամբ կատարված հանցագործություն է համարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այն արարքը, որը կատարվել է ֆիզիկական և հոգեկան բռնության գործադրմամբ և առաջացրել է տուժողի մահ կամ նրան պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնասվածք:

Սակայն պարզ չէ, թե որն է «ծանր կամ միջին ծանրության վնասվածք» արտահայտության բովանդակությունը. արդյոք խոսքը վերաբերում է միայն առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելուն, թե նաև այլ հանցավոր արարքներին.

3) համաձայն 4-րդ հոդվածի՝ փոխհատուցման պահանջով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին դիմելու իրավունք է նախատեսվում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով տուժող ճանաչված՝ բռնությամբ կատարված հանցագործության զոհի, իսկ նրա մահվան կամ կամքն արտահայտելու ունակությունը կորցնելու դեպքում՝ տուժողի իրավահաջորդի համար:

4) համաձայն 5-րդ հոդվածի, եթե հանցագործություն կատարած անձը չի հայտնաբերվել կամ նրան քրեական պատասխանատվության ենթարկելն անհնար է, տուժողը փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունք է ստանում՝

ա. եթե հանցագործությամբ տուժողին մահ է պատճառվել և դեպքից անցել է մեկ տարի.

բ. եթե հանցագործությամբ տուժողին ծանր կամ միջին ծանրության վնասվածք է պատճառվել և դեպքից անցել է վեց ամիս:

Առաջարկվող ձևակերպումից հետևում է, որ փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունքի ծագումը կապվում է ցանկացած հանցագործության հետ, որով տուժողին պատճառվել է մահ, ծանր կամ միջին ծանրության վնասվածք՝ անկախ կատարված հանցանքի մեղքի ձևից: Այսպիսի իրավիճակում ստացվում է, որ, եթե նույնիսկ անզգուշությամբ տուժողի առողջությանը պատճառվել է, ասենք, միջին ծանրության վնաս, և վնասը պատճառվելուց հետո վեց ամսվա ընթացքում հանցանք կատարած անձը չի հայտնաբերվել, ապա տուժողն իրավունք է ստանում փոխհատուցման պահանջով դիմելու լիազոր մարմին: Ընդ որում, անձը լիազոր մարմին փոխհատուցման պահանջով կարող է դիմել տուժող ճանաչվելուց անմիջապես հետո, քանի որ այդ իրավունքի ծագումը օրենքի նախագծում կապվում է հանցագործության դեպքի հետ:

Այս առումով հասկանալի չէ, թե ինչպես է լուծվելու հարցն այն իրավիճակներում, երբ տուժողին լիազոր մարմնի կողմից փոխհատուցում տրամադրվելուց հետո նրան տուժող ճանաչելու մասին որոշումը վերացվի անհիմն, կամ անօրինական լինելու պատճառով կամ քրեական գործով վարույթը հանցագործության դեպքի բացակայության հիմքով կարճվի: Արդյոք այս դեպքում հնարավոր է տուժողից հետ գանձել տրված գումարները:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա է մինչև հանցանք կատարած անձի հայտնաբերումը կամ նրա դատապարտումը փոխհատուցման հնարավորություն, եթե կան հրատապ իրավիճակներ կամ տուժողների իրավունքները պաշտպանելու

հետաձգում չհանդուրժող անհրաժեշտություն: Ընդ որում, խոսքը վերաբերում է միայն դիտավորությամբ կատարված հանցագործություններին (օրինակ՝ Լիտվա, Իսպանիա և այլն):

Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերն ու ժամկետները չեն պահպանվում, եթե հանցագործություն կատարած անձն անվճարունակ է կամ մահացել է (ճանաչվել է մահացած): Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ քաղաքացին կարող է մահացած ճանաչվել նաև դատարանի վճռով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի դրույթների.

5) համաձայն 6-րդ հոդվածի՝ փոխհատուցման մեջ հաշվարկվող ծախսերում ներառված է նաև բարոյական վնասի փոխհատուցման գումարը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2014 թվականի մայիսի 19-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով օրենսգրքում ներդրվել է ոչ նյութական վնասի փոխհատուցման մեխանիզմը: Միաժամանակ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ուղղված է լրացնելու ոչ նյութական վնասի հատուցման նշված կառուցակարգը.

6) 7-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձի մասին **նշումներ**» արտահայտությունը:

Համաձայն նույն հոդվածի 8-րդ մասի՝ փոխհատուցման չափի հաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Այս առումով առաջարկվող կարգավորումը գործնականում կարող է կիրառության հետ կապված խնդիրներ առաջացնել:

Նույն նկատառումը վերաբերում է նաև օրենքի նախագծի 12-րդ հոդվածին.

7) օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ փոխհատուցումը, լիազոր մարմնի կամ նրա որոշումը բողոքարկելու դեպքում՝

ա. վարչական դատարանի կողմից կարող է նվազեցվել կամ մերժվել, եթե մինչև հանցագործության կատարումը տուժողն իր գործողություններով և վարքագծով սադրել է իր նկատմամբ կատարված հանցանքը: Առաջարկվող կարգավորման պայմաններում ստացվում է՝ լիազոր մարմինը կամ վարչական դատարանը փոխհատուցման պահանջի քննարկման յուրաքանչյուր դեպքում, քրեական վարույթը չավարտված լինելու պայմաններում, պետք է նաև գնահատի՝ արդյոք տուժողը սադրել է հանցագործության կատարումը: Այսպիսի կարգավորումը զուրկ է կիրառության համար իրավական հիմքերից և չի կարող ընդունելի լինել, քանի որ սկզբունքորեն հակասում է Հայաստանի Հանրապետության քրեադատավարական գործող համակարգի պահանջներին: Բացի դրանից՝ լիազոր մարմինը կամ վարչական դատարանը չունի և չի էլ կարող ունենալ անհրաժեշտ իրավական գործիքներ՝ լուծելու համար օրենքի նախագծով ներկայացվող խնդիրը,

բ. դատարանի կողմից կարող է նվազեցվել կամ մերժվել, եթե տուժողին փոխհատուցման տրամադրումը մասամբ կամ ամբողջությամբ կհակասի **արդարադատության շահին:** Այսպիսի կարգավորումը նույնպես չի կարող ընդունելի լինել, քանի որ հասկանալի չէ, թե ինչ սկզբունքներով կամ ինչպես է գործադիր իշխանության մարմինը որոշելու՝ արդյոք փոխհատուցման տրամադրումը համապատասխանում է արդարադատության շահին: Ավելին, օրենքի նախագծով չի հստակեցվում «արդարադատության շահ» հասկացությունը, և պարզ չէ, թե որոնք են լինելու դրա բովանդակությունը բացահայտող չափանիշները.

8) 10-րդ հոդվածով սահմանվում է պետության հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը: Այս առումով պարզ չէ, թե ինչպես է իրականացվելու ռեգրեսի իրավունքը, երբ քաղաքացին սնանկ (անվճարունակ) է ճանաչվում.

9) 13-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է օրենքին տալ հետադարձ ուժ, և դրա կիրառելիության ժամկետի հաշվարկումն սկսել 2002 թվականի ապրիլի 26-ից:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշման մեջ արձանագրել է, որ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը պայմանավորված է օրենսդրի հայեցողությամբ: Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) վճռում արձանագրվել է, որ Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հետևանքներով պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը պետք է սկզբունքորեն հասանելի լինի իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում: Օրենքի նախագծի հիմնավորումներում վկայակոչված՝ նշված նախադեպում հետադարձ ուժ սահմանելու՝ պետության պարտականության վերաբերյալ որևիցե իրավադրույթ չի սահմանվել:

Օրենքի նախագծի հիմնավորման մեջ վկայակոչված ՄԻԵԴ վճիռներում ևս առկա չէ առանձին օրենքի տեսքով բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցում տալու պահանջ: ՄԻԵԴ-ը իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում միայն մատնանշել է ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմի առկայության պահանջը: Բացի դրանից՝ Եվրոպական կոնվենցիայի կարգավորման առարկան և նպատակները չեն առնչվում այն հարցերին, որոնք կարգավորվում են «Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» եվրոպական կոնվենցիայով:

Օրենքի նախագծին կից հիմնավորման մեջ նշվում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով կոնվենցիան (որը դեռևս չի վավերացվել) և կոնվենցիայում նշված կառուցակարգերն ստեղծելու ուղղությամբ մինչև այժմ գործուն քայլեր չձեռնարկելով, խախտում է Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 18-րդ հոդվածը: Նման տեսակետը չի բխում Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածի

մեկնաբանություններից, քանի որ նշված հոդվածով ամրագրվում է միայն այն, որ պայմանագիրն ստորագրած պետությունը, մինչև պայմանագրի վավերացումը, պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակառակ են պայմանագրի նպատակին և առարկային:

Հատկանշական է, որ առկա չէ միասնական մոտեցում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պայմանագիրն ստորագրած, բայց դեռևս չվավերացրած պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն՝ կատարելու տվյալ պայմանագրից բխող գործողությունները: Նման դեպքերում պետության վրա դրվում են ոչ այնքան որոշակի գործողություններ կատարելու, որքան որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու պարտավորություն: Վիեննայի կոնվենցիայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունների լիազոր ներկայացուցիչները ևս այս նորմը դիտարկում են որպես պայմանագրի կնքման պահին առկա իրավիճակի պահպանում, որպեսզի հետագայում պետությունն իր գործողություններով չփոփոխի այն իրավիճակը, որն առկա է պայմանագրի ստորագրման պահին:

II. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

Գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունն առկա չէ: Տուժողի՝ փոխհատուցում ստանալու իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում, որի համաձայն տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստանալու քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը: Այսինքն՝ գործող քրեական դատավարության օրենսգիրքն արդեն իսկ նախատեսում է չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը՝ **չսահմանափակելով դրանք հանցագործությունների կոնկրետ շրջանակով:**

Հարկ ենք համարում հայտնել, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը կհանգեցնի բյուջետային լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով ծախսերի բնույթից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի չէ, քանի որ հաշվի չի առնում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի առանձնահատկությունները, ինչպես նաև բովանդակում է կարգավորումներ, որոնք չունեն կիրառության համար բավարար հիմքեր:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արման Թաթոյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցում տալու հիմքերը, պայմաններն ու կարգը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցում տրամադրելու հիմքերը, պայմաններն ու կարգը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով առաջարկվում է լիազոր մարմնի որոշմամբ և իր սահմանած չափերով ՀՀ պետական բյուջեից փոխհատուցում տրամադրել բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին, եթե հանցագործություն կատարած անձինք չեն բացահայտվում և քրեական պատասխանատվության չեն կանչվում կամ նրանք անհասանելի են ՀՀ իրավապահ մարմինների համար, կամ մահացել են, կամ անվճարունակ են: Մասնավորապես նախատեսվում է փոխհատուցել՝

- կորցրած աշխատավարձը (եկամուտը),
- առողջության քայքայման հետևանքով ծագած ծախսերը՝ այդ թվում նաև այլ ծախսերը, որոնց համար չեն կարող ներկայացվել ֆինանսական փաստաթղթեր,
- բարոյական վնասի հատուցման գումարը,
- հուղարկավորության ծախսերը՝ այդ թվում նաև գերեզմանի կառուցման և հարդարման ծախսերը,
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածով սահմանված անձանց՝ կենսապահովման միջոցի կորուստը,
- պահանջի ապահովմանը ուղղված՝ տուժողի կողմից կատարված դատական ծախսերը:

Նշված օրենքների նախագծերի ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, որի չափը հնարավոր չէ գնահատել ելնելով ծախսերի բնույթից:

Միևնույն ժամանակ, ելնելով այն հանգամանքից, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 19-րդ ենթակետի համաձայն նվազեցվող եկամուտ չեն համարվում կորցված եկամտի փոխհատուցումը՝ գտնում ենք, որ կորցրած աշխատավարձի (եկամտի) փոխհատուցման գումարները եկամտային հարկով հարկելու մասով նախագծերի ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի եկամուտների

ավելացման: Այս դեպքում ևս կոնկրետ գնահատական հնարավոր չէ տալ, քանի որ պարզ չէ, թե նախագծերի ընդունումից հետո կորցրած աշխատավարձի (եկամտի) մասով որքան գումար կփոխատուցվի: Սակայն, ցանկացած դեպքում, պետական բյուջեի ծախսերի ավելացումը կգերազանցի եկամուտների ավելացմանը:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ նախագծերի ընդունումը համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-582-29.08.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցում տալու հիմքերը, պայմաններն ու կարգը:

Հոդված 2. Բռնությամբ կատարված հանցագործության հասկացությունը

Սույն օրենքի իմաստով բռնությամբ կատարված հանցագործություն է համարվում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն արարքը, որը կատարվել է ֆիզիկական եւ հոգեկան բռնության գործադրմամբ եւ առաջացրել է տուժողի մահ կամ նրան պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնասվածք:

Հոդված 3. Բռնությամբ կատարված հանցագործության զոհը, նրա փոխհատուցում ստանալու իրավական հիմքերը

1. Բռնությամբ կատարված հանցագործության զոհը այդ արարքի հետեւանքով մահացած կամ ծանր կամ միջին ծանրության վնասվածք ստացած անձն է:

Բռնությամբ կատարված հանցագործության զոհին փոխհատուցում տալու իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության եւ քաղաքացիական օրենսգրքերը, սույն օրենքը, այլ օրենքներ:

Հոդված 4. Բռնությամբ կատարված հանցագործության զոհի փոխհատուցում ստանալու իրավունքի ծագումը

Բռնությամբ կատարված հանցագործության զոհի փոխհատուցման իրավունքը ծագում է եթե.

1) բռնությամբ կատարված հանցագործության հետեւանքով անձին պատճառվել է մահ:

2) բռնությամբ կատարած հանցագործության արդյունքում անձի առողջությանը պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնասվածք:

Փոխհատուցման պահանջով ՀՀ կառավարության լիազոր մարմնին (այսուհետ՝ Լիազոր մարմին) դիմելու իրավունք ձեռք է բերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով տուժող ճանաչված բռնությամբ կատարված հանցագործության զոհը, իսկ նրա մահվան կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցնելու դեպքում՝ տուժողի իրավահաջորդ ճանաչված անձը (այսուհետ՝ տուժող):

Հոդված 5.Տուժողի կողմից փոխհատուցման պահանջի ներկայացման դեպքերն ու ժամկետները

1. Երբ հանցագործություն կատարած անձը չի հայտնաբերվել կամ նրան քրեական պատասխանատվության ենթարկելը անհնար է, տուժողը փոխհատուցման պահանջի ներկայացման իրավունք է ստանում

1) եթե հանցագործությամբ տուժողին մահ է պատճառվել եւ դեպքից անցել է մեկ տարի,

2) եթե հանցագործությամբ տուժողին ծանր կամ միջին ծանրության վնասվածք է պատճառվել եւ դեպքից անցել է վեց ամիս:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերն ու ժամկետները չեն պահպանվում, եթե հանցագործություն կատարած անձը անվճարունակ է կամ մահացել է (ճանաչվել է մահացած):

Հոդված 6. Փոխհատուցման մեջ հաշվարկվող ծախսերը՝

Հաշվարկվում եւ փոխհատուցվում են հետեւյալ ծախսերը.

1) կորցրած աշխատավարձ (եկամուտ),

2) առողջության քայքայման հետեւանքով ծագած ծախսեր՝ այդ թվում նաեւ այլ ծախսեր, որոնց համար չեն կարող ներկայացվել ֆինանսական փաստաթղթեր,

3) բարոյական վնասի փոխհատուցման գումարը

4) հուղակավորության ծախսեր՝ այդ թվում նաեւ գերեզմանի կառուցման եւ հարդարման ծախսեր,

5) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածով սահմանված անձանց՝ կենսաապահովման միջոցի կորուստը,

6) պահանջի ապահովմանը ուղղված՝ տուժողի կողմից կատարված դատական ծախսերը:

Հոդված 7. Փոխհատուցում տրամադրելու կարգը

1. Տուժողը, փոխհատուցում ստանալու իրավունքը սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ժամկետներով ծագելուց հետո, 6 ամսվա ընթացքում կարող է դիմել Լիազոր մարմնին, փոխհատուցում ստանալու համար:

2. Դիմումին կցվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկով փաստաթղթերը:

3. Դիմումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում Լիազոր մարմինը կայացնում է դիմումը բավարարելու կամ մերժելու մասին որոշում՝ երեք օրվա ընթացքում այն պատշաճ կերպով ուղարկելով դիմողին:

4. Դիմումը բավարարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն այն կայացնող մարմնի անվանումը, փոխհատուցումը տրամադրելու հիմքերը, փոխհատուցման չափը, փոխհատուցումը ստանալու իրավունք ունեցող անձի մասին նշումներ, փոխհատուցման տրամադրման ժամկետը:

5. Փոխհատուցումը տրամադրվում է դիմումը բավարարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

6. Փոխհատուցման պահանջը Լիազոր մարմնի կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժվելու կամ դիմումը չքննարկվելու դեպքում այն կարող է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատարան:

7. Փոխհատուցումը տրամադրվում է միանվագ:

8. Փոխհատուցման չափի հաշվարկն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով եւ կարգով:

Հոդված 8. Փոխհատուցում տալու նվազեցումը կամ մերժումը

1.Փոխհատուցումը, Լիազոր մարմնի կամ նրա որոշումը բողոքարկելու դեպքում՝ դատարանի կողմից, կարող է նվազեցվել կամ մերժվել, եթե՝

1) մինչեւ հանցագործության կատարումը տուժողը իր գործողություններով եւ վարքագծով, սադրել է իր նկատմամբ կատարված հանցանքը,

2) տուժողը կազմակերպված հանցավոր խմբի անդամ է եւ բռնությամբ կատարված հանցագործությունը կատարվել է այդ խմբի (անդամի) կողմից,

3) տուժողին փոխահատուցման տրամադրելը մասամբ կամ ամբողջությամբ կիսակասի արդարադատության շահին:

Հոդված 9. Կրկնակի փոխհատուցումից խուսափելը

1. Կրկնակի փոխհատուցումը բացառելու համար, Լիազոր մարմինը կամ նրա որոշումը բողոքարկելու դեպքում՝ դատարանը փոխհատուցվող գումարի տրամադրումը մերժում է կամ համապատասխան չափով նվազեցնում է, եթե մինչեւ պահանջի ներկայացնելը տուժողը վնասի լիարժեք կամ համապատասխան չափով փոխհատուցում է ստացել սոցիալական ծառայության, ապահովագրական ընկերությունից կամ որեւէ այլ աղբյուրից:

Հոդված 10. Լիազոր մարմնի հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը

1. Բռնությամբ կատարած հանցագործության մեջ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով մեղավոր ճանաչված անձից կամ անձանցից պետությունը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի՝ Լիազոր մարմնի կամ նրա որոշումը բողքարկելու դեպքում՝ դատարանի որոշած եւ տուժողին տրված գումարի չափով, եթե օրենքով այլ չափ սահմանված չէ:

2. Բռնությամբ կատարված այն հանցագործություններով, որոնք կատարվել են խմբի կողմից, խմբի անդամների նկատմամբ պետությունը հետադարձ պահանջ ներկայացնում է վնասը պատճառողների մեղքի աստիճանին համապատասխան իսկ մեղքի աստիճանը որոշելու անհնարինության դեպքում՝ համապարտ:

Հոդված 11. Պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ կատարելիս բռնությամբ կատարված հանցագործությամբ կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի փոխհատուցումը

1.Պայմանագրային պարտավորություններ, պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության եւ փրկարար ծառայության ծառայողների եւ այլ ծառայողական պարտականություններ կատարելիս բռնությամբ կատարած հանցագործությամբ տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցվում է սույն օրենքով նախատեսված հիմքերով եւ կարգով եթե այլ օրենքով ավելի բարենպաստ պայմաններ նախատեսված չէ:

Հոդված 12. Բռնությամբ կատարված հանցագործություններից տուժողների փոխհատուցման չափը

1. Տուժողին տրվող փոխհատուցման չափը որոշվում է Լիազոր մարմնի կամ նրա որոշումը բողոքարկվելու դեպքում՝ դատարանի կողմից, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով եւ սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

Հոդված 13. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը ունի հետադարձ ուժ եւ նրա կիրառելիության ժամկետը սկսվում է հաշվարկվել 2002թ. ապրիլի 26-ից:

3. Սույն օրենքի ուժ մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում 2002թ. ապրիլ 23-ից հետո տեղի ունեցած բռնությամբ կատարված հանցագործություններով տուժողները կարող են դիմել Լիազոր մարմին՝ փոխհատուցում ստանալու համար:

4. ՀՀ Կառավարությունը սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում սահմանում է փոխհատուցում տրամադրելու դիմումի ձեւը, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը եւ Լիազոր մարմինը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-582[1]-29.08.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հարապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 6-րդ մասով.

«6. Բռնությամբ կատարված հանցագործություններով, երբ հանցագործություն կատարած անձի հայտնաբերելը եւ քրեական պատասխանատվության ենթարկելը անհնարին է, կամ հանցագործության մեջ մեղադրվող անձը մահացած է կամ անվճարունակ, տուժողը ունի փոխհատուցում ստանալու իրավունք»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմանական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:»

Կյանքի իրավունքը եւ խոշտանգումների արգելքի իրավունքը մարդու եւ քաղաքացու կարեւորագույն իրավունքներից են:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «Տուժողին պատճառված վնասը հատուցվում են օրենքով սահմանված կարգով»: Ակնայտ է, որ Սահամանադրությունը հռչակել է տուժողին պատճառված վնասը հատուցվում է: Օրենքով պետք է սահմանվի միայն այդ վնասի հատուցման կարգը: Մինչդեռ գործող օրենսդրությամբ տուժողի վնասը ենթակա է հատուցման, եթե հանցանքի կատարման մեջ մեղադրվողը հայտնաբերվում եւ դատապարտվում է եւ միաժամանակ բավարար միջոցներ է ունենում հասցված վնասը փոխհատուցելու համար: Բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը իրավապահ մարմինների համար անհասանելի է լինում, կամ էլ ուղղակի դատապարտյալը անվճարունակ է, տուժողը վնասի փոխհատուցում չի ստանում:

Առաջարկվող այս նախագիծը նպատակ է հետապնդում լրացնելու օրենսդրական այս բացը: Գիտակցելով, որ հանցագործությամբ տուժողների փոխհատուցումը լուրջ բեռ է ՀՀ-ի համար եւ ներկայաումս անիրական, նախագծի հեղինակաները առաջարկում են այս փուլում փոխհատուցում տրամադրել բռնությամբ կատարած հանցագործության զոհերին, եթե հանցագործություն կատարած անձինք չեն բացահայտվում եւ քրեական պատասխանատվության չեն կանչվում կամ նրանք անհասանելի են ՀՀ իրավապահ մարմինների համար, կամ մահացել են, կամ անվճարունակ են:

Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ներպետական իրավական համակարգում հանցագործությունից տուժած անձանց իրավական պաշտպանության միջոցների բարելավման անհրաժեշտությամբ, այս ոլորտի առնչությամբ միջազգային իրավունքի զարգացումներով և դրա հետ կապված Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով:

2001 թվականի նոյեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է «Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին եվրոպական կոնվենցիան» (այսուհետ՝ Կոնվենցիա): Սահմանադրական Դատարանը 2003 թ. օգոստոսի 20-ին որոշել է, որ Կոնվենցիայով «ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»[1]: Այս երկու հանգամանքները բավարար են, որպեսզի գործի Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի Կոնվենցիա) 18-րդ հոդվածով ամրագրված հայտնի սկզբունքը, ըստ որի պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակառակ են պայմանագրի առարկային ու նպատակին, երբ այն վավերացման ենթակա պայմանագիրն ստորագրել է:[2] Այսպիսով, նշված սկզբունքը միջազգային պայմանագիրը ստորագրած պետության համար սահմանում է «միջանկյալ
պարտավորություն», որի նպատակն է կարգավորել տվյալ պետության վարքագիծը մինչև պետության կողմից պայմանագրին վերջնական միանալը [3]: Անկասկած է, որ Կոնվենցիայի 18-րդ հոդվածում օգտագործված «պարտավոր է» արտահայտությունը սահմանում է միջազգային պարտավորություն: Ուստի, Կոնվենցիայի ստորագրման ակտով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կհակասեն Կոնվենցիայի առարկային ու նպատակին:

Կոնվենցիայի «առարկան» ու «նպատակը» մեկնաբանված են Կոնվենցիայի նախաբանում, ըստ որի Կոնվենցիայի նպատակն է, inter alia, ազգային համակարգերում սահմանել կառուցակարգեր բռնությամբ կատարված հանցագործության զոհերին փոխհատուցում տրամադրելու համար՝ հատկապես այն դեպքերում, երբ «իրավախախտիչը հայտնաբերվել կամ չունի ռեսուրսներ»: Նպատակն ու առարկան բացահայտված են նաև Կոնվենցիայի մեկնաբանման աղբյուր հանդիսացող Բացատրական զեկույցում[4], ըստ որի զոհերին փոխհատուցելու պետության պարտականություն
ըպայմանավորված է առնվազն երեք տեսական հիմքերով.

1) պետությանը չիհաջողվել կանխել հանցագործությունը արդյունավետ քրեական քաղաքականության միջոցով,

2) պետության կիրառած քրեական քաղաքականությունը ձախողվել է,

3) արգելելով անձնական վրեժխնդրությունը, պետությունը դրանով իրվրավերցրել է պարտավորություն հանդարտեցնել զոհին կամ նրա իրավահաջորդներին: Այսպիսով, ակնհայտ է, որ Կոնվենցիան ստորագրելու ակտով Հայաստանի Հանրապետությունը իր վրա վերցրել է միջանկյալ միջազգային պարտավորություն մինչև Կոնվենցիայի վավերացնելը ձեռնպահ մնալ Կոնվենցիայի նպատակին ու առարկային հակասող գործողություններից:

Այն հանգամանքը, որ 2001 թվականի նոյեմբերի 8-ից մինչ այժմ գործուն քայլեր չեն ձեռնարկվել Կոնվենցիան վավերացման և նշված կառուցակարգերը ստեղծելու ուղղությամբ և ոչ էլ որևէ օբյեկտիվորեն հիմնավորված հիմքեր ու պատճառաբանություններ են ներկայացվել վերը նշվածը չկատարելու ուղղությամբ, խոսում է Հայաստանի Հանրապետության՝ որպես Կոնվենցիան ստորագրած պետության ռեգրեսիվ մտադրության մասին, որը հակասում է Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածով սահմանված պարտավորությանը:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) բխող պարտավորություններից: Բռնությամբ կատարված հանցագործության զոհերի՝ արդարացի փոխհատուցման իրավունքը ամրագրված է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք), 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելում) և 8-րդ հոդվածի (անձնական կյանքի իրավունքի նկատմամբ հարգանքի իրավունք) դատավարական (վարույթային) բաղադրիչներով, որոնք միասին բարձրացնում են նաև 13-րդ հոդվածի (իրավական պաշտպանության արդյունավետ պաշտպանության միջոց) խնդիր: Ավելին, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն,«Կոնվենցիայի առավել հիմնարարդրույթներ հանդիսացող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը պետք է սկզբունքորեն հասանելի լինի իրավական իրավական պաշտպանության հնարավոր միջոցների շարքում»[5] :Ի դեպ, հենց այս նախադեպային դիրքորոշումն է, ի թիվս այլ հիմքերի, վկայակոչվել նաև Սահմանադրական դատարանի կողմից, երբ վերջինս 2013թ. նոյեմբերի 5-ին սահմանեց, որ այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը «վնաս» հասկացության տակ չի սահմանում բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում ստանալու հիմք, հակասում է Սահմանադրությանը: Այս որոշման հիման վրա Սահմանադրական դատարանը հրավիրեց Ազգային ժողովին մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը սահմանել իրավախախտման զոհերի բարոյական վնասի հաշվարկման նյութաիրավական հիմքերի և հաշվարկման կարգի մասին իրավական կառուցակարգեր: Ուստի, վերընշվածը հաշվի առնելով կարելի է եզրահանգել, որ առնվազն 2002 թվականի ապրիլի 26-ից (Եվրոպական կոնվենցիայի վավերացման օրից) բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, բռնությամբ կատարված և չբացահայտված հանցագործության զոհերին կամ նրանց իրավահաջորդներին չի տրամադրվում փոխհատուցում, խախտվում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածը, 3-րդ հոդվածը և դրանց զուգակցությամբ նաև 13-րդ հոդվածը[6]: Իսկ հաշվիառնելով այն հանգամանքը, որ փոխհատուցման իրավական կառուցակարգի և, հետևաբար, նաև հնարավորության բացակայությունը ինքնին հանդիսանում է շարունակական բնույթի խախտում, այսինքն փոխհատուցում չտրամադրելու յուրաքանչյուր օրը համարվում է կրկնվող խախտում և այդ
իմաստով միջազգային դատարանին դիմելու սահմանված ժամկետը սկսվում է յուրաքանչյուր օրվա հետ միասին (այսինքն՝ ժամկետը հոսում է յուրաքանչյուր օրվա հետ միասին և այս առումով չկա հայցային վաղեմության ժամկետ), ստացվում է, որ բռնությամբ կատարված հանցագործության զոհերը կամ նրանց իրավահաջորդները առնվազն 2002 թվականիապրիլի 26-ից կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և նման դեպքերում դատարանը նրանց նկատմամբ չի կիրառի հայցային վաղեմության ներկայիս 4-ամսյա ժամկետը[7]:

Այսպիսով, օրենքի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության՝ ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանած պետության պարտականությունից, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերով սահմանված Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից:

[1]ՍԴՈ-443 որոշում:

[2]Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի Կոնվենցիա, հոդված 18:
[3]«Միջազգային պայմանագրի նպատակն ու առարկան. Մեկնաբան մաներեք մեթոդները: Դեյվիդ Ջոնաս և Թոմաս Սաունդերս: "Vanderbilt Journal of Transnational Law"'.հատոր 43, թիվ 3, մայիս 2010, էջ 594: Տե՛սնաև http://www.vanderbilt.edu/jotl/manage/wp-content/uploads/JonasSaunders-cr_v2.pdf
[4]Տե՛սhttp://conventions.coe.int/Treaty/EN/Reports/HTML/116.htm
[5](*Պողոսյանը և Բաղդասարյանը ընդդեմ Հայաստանի*, թիվ 22999/06, ՄԻԵԴ, 12/07/2012, § 46:
[6]Ներկայումս ՄԻԵԴ-ում ընթացքի մեջ են գտնվում նանհիմքովմոտմեկ տասնյակ գանգատներ:
[7]Տե՛ս նույնանման հանգամանքներում ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները *Վառնավան ու այլոք ընդդեմ Թուրքայի,* թիվ16064/90, 18/09/2009թ., § 159: